Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 1

ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի խորհրդի 2010թ. սեպտեմբերի 10-ին կայացած թիվ 1 նիստի արձանագրությունից

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Առաջին կուրսեցիների ընդունելության արդյունքները, կատարվելիք աշխատանքները, կուրատորների գործուեությունը:
2. Հոկտեմբերին կայանալիք Վահան Տերյանին և Հրանտ Մաթևոսյանին նվիրված գիտական նստաշրջանների կազմակերպման ընթացքը ֆակուլտետում:
3. Թեմատիկ գիտական աշխատանքների կատարման վիճակը գիտական խմբերում:
4. Գրավոր քննությունների անցկացման և հսկման խնդիրները ամբիոնում:
5. Ընթացիկ հարցեր:

Ֆակուլտետի դեկանը ներկայացրեց ընդունելության քննությունների արդյունքները և նկատեց, որ դրանք գոհացուցիչ են, քանի որ նկատելի մեծացել է հայ բանասիրության ֆակուլտետ ընդունվողների մրցույթը:

Հոկտեմբերին կայանալիք Վահան Տերյանին և Հրանտ Մաթևոսյանին նվիրված գիտական նստաշրջանների կազմակերպման առիթով ելույթ ունեցան հայ գրականության և նորագույն գրականության ամբիոնի վարիչներ, պրոֆեսորներ Ս. Մուրադյանը և Վ. Գաբրիելյանը: Վերջիններս նշեցին, որ իրենց ամբիոնների ըստ պատշաճի նախապատրաստվել են միջոցառումների անցկացումը: Ամբիոնի անդամները պատրաստել են համապատասխան զեկուցումները:

Թեմատիկ գիտական աշխատանքների կատարման վիճակի առիթով ելույթ ունեցավ պրոֆ. Ա. Ավագյանը: Նա հանձնարարեց մինչև տարեվերջ ավարտել դրանց կատարումը:

4-րդ հարցի առիթով ելույթ ունեցող Ա. Սարգսյանը նկտեց, որ ֆակուլտետում կազմակերպվող գրավոր աշխատանքների հսկողությունը դեռևս չի գտնվում բավարար վիճակում և անհրաժեշտ համարեց ամբիոնների վարիչների համապատասխան միջամտությունը գործընթացը կազմակերպելու մեջ, այլապես գրավոր աշխատանքների արդյունները կարող են համարվել անվավերԼ

ԼՍԵՑԻՆ.- Հայ նորագույն գրականության ամբիոնի 2010թ. առկա ասպիրանտ **Սևակ Արմենի Ղազարյանի** թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցերը:

ԱՐՏԱՀԱՅՎԵՑԻՆ.- Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Կ. Աղաբեկյանը, Ժ. Քալանթարյանը և Ս. Մուրադյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել՝

1. **Սևակ Արմենի Ղազարյանի** ատենախոսության թեման՝ «**Պարույր Սևակի անտիպ ժառանգությունը**»՝ Ժ 01. 02 - «Հայ նորագույն գրականություն» մասնագիտությամբ.
2. գիտական ղեկավար՝ բան. գիտ. թեկնածու, դոցենտ Սեյրան Զավենի Գրիգորյանին:

ԼՍԵՑԻՆ.- Հայ գրականության ամբիոնի 2010թ. առկա ասպիրանտ **Դավիթ Օնիկի Ղարիբյանի** թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՎԵՑԻՆ.- Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Զ. Ավետիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել՝

1. **Դավիթ Օնիկի Ղարիբյանի** ատենախոսության թեման՝ «**Վահան Տերյանի պոեզիան ռուսերեն թարգմանություններում և քննադատության մեջ /1940 – մինչև մեր օրերը/**»՝ Ժ 01.01 - «Հայ դասական գրականություն» մասնագիտությամբ.
2. գիտական ղեկավար նշանակել բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Մագդալինա Գեորգիի Ջանփոլադյանին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ